ԳՆԵԼ-ՏԻՐԻԹՅԱՆ ՎԻՊԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հայ հնագույն պատմական աղբյուրների մեջ իր ուրույն տեղն ունի V դարի պատմիչ Փավստոս Բյուզանդի «Պատմութիւն Հայոց»-ը։ Ի շարս այլ կարևոր մատենագրական երկերի, հայագիտությունը վաղուց ի վեր փաստերով հավաստել է նաև այս ուշագրավ պատմագրական հուշարձանի խոշոր արժեքը հայոց հնագույն անցյալի քաղաքական ու քաղաքացիական պատմության հետազոտման համար։

Մեր նշանավոր հայագետների հմտալից հետազոտություններում հանգամանորեն քննության են ենթարկվել ոչ միայն Փավստոսի մատենագրական երկի բնագրի հետ կապված բանասիրական-տեքստաբանական էական հարցերը, այլև գիտական հիմնավոր մեկնաբանություն են ստացել նրա բնույթի ու աղբյուրների հետ կապված կարևոր խնդիրները։

Ըստ ամենայնի արժեքավորելով Փավստոսի մատյանը իբրև աչքի ընկնող սկզբնաղբյուր IV դարի հայ կյանքի կարևոր իրադարձությունների ուսումնասիրության համար, հաստատելով նրա մի շարք տվյալների հավաստիությունը մասնավորապես Արշակունյաց Հայաստանի ներքին քաղաքական կյանքի կենցաղի հարցերի գիտական լուսաբանության տեսակետից, հայագիտությունը միաժամանակ տեղին մատնանիշ է արել նրա սերտ կապը ավանդական զրույցների ու ժողովրդական վեպի հետ։ Հիրավի, «այժմ այլևս կասկած չկա, որ այդ գրքի գլխավոր աղբյուրները եղել են ավանդական զրույցներ, լեգենդներ, վեպեր և նույնիսկ երգեր»[1]։

Այս հանգամանքն էլ ինքնին պայմանավորում է Փավստոսի «Պատմության» յուրօրինակ ու բարդ բնույթը իբրև պատմական սկզբնաղբյուրի, որոշում նրա առանձնահատուկ տեղը հայ հնագույն մատենագրական երկերի շարքում։

Փավստոս Բյուզանդի ստեղծագործության մեջ շատ հաճախ պատմական հավաստի փաստն ու վիպական-ավանդականը այնքան միախառնված են, միահյուսված կամ միաձուլված, որ չափազանց դժվար է դրանց իսկական սահմանագծերը ճշտորեն հաստատելը, այն բանը որոշելը, թե որտե՞ղ է վերջանում իրական-պատմականը և որտե՞ղ սկսվում վիպական-ավանդականը։ Այստեղից էլ միանգամայն ակնառու է, թե ինչ մեծամեծ թյուրիմացությունների առիթ կարող է տալ Բյուզանդի «Պատմության» անվերապահ օգտագործումը՝ իբրև ստույգ պատմական աղբյուրի։ Ամեն առանձին դեպքում եղելությունների էությունը կամ պատմական անձնավորությունների արարքները քննելիս հետազոտողը պարտավոր է առավելագույն զգուշություն հանդես բերել՝ զատելով պատմականը վիպականից, իրական պատմությունը դեպարվես-

---

[1] Մ. Ա ե ղ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 1, Երևան, 1944, էջ 170։

տական հնարանքից, հնարավորին չափ ճշգրտելով այս կամ այն ավանդապատում գրույցի պատմական աստառը, բացահայտելով նրա տակ թաքնված ճշմարտությունը։

Ինչպես ճիշտ նկատել են՝ «Բյուզանդի «Պատմության» մանրակրկիտ ուսումնասիրությունն այս տեսանկյունով մեծապես կնպաստեր այդ հուշարձանի բազմակողմանի արժեքավորման գործին, կսահմանազծեր բանաստեղծական վիպական հնարանքն ու ստեղծագործական գյուտերն իրական-պատմական վավեր իրադարձություններից, կորոշեր նրա արժեքը թե՛ որպես գեղարվեստական երկ և թե՛ իբրև Հայաստանի պատմության հիմնական սկզբնաղբյուր»[2]։

Այս ուղղությամբ մեր պատմագրությունն ու բանասիրությունն արդեն որոշ գործ կատարել է։ Սույն հոդվածում մենք քննության ենք առնելու Փավստոս Բյուզանդի «Պատմության» մեջ պահպանված, Արշակ Բ թագավորի դահակալության շրջանի իրադարձություններին վերաբերող Գնել-Տիրիթյան հայտնի ավանդազրույցը՝ նպատակ ունենալով պարզելու այն հարցը, թե ի՞նչ իրական եղելության մասին է պատմում նա այլաբանորեն, ո՞րն է արդյոք նրա տակ թաքնված պատմական ճշմարտությունը։

Նկատենք, որ ի շարս այլ ավանդական զրույցների, բանասիրությունը բազմիցս անդրադարձել է Փավստոսի «Պատմության» մեջ տեղ գտած այս վիպական ավանդությանը ևս բանահյուսական տեսանկյունով։

Բավականաչափ մանրամասն քննության են ենթարկված ավանդապատում այդ գեղեցիկ հյուսվածքի վիպական-գեղարվեստական հանգամանքները, առանձնահատկությունները։ Առանձնապես մեծ արժեք է ներկայացնում խնդրո առարկա ավանդազրույցի բանահյուսական-գեղագիտական հանգամանալից ու սպառիչ քննությունը, որ իրականացվել է բազմավաստակ հայագետ Մ. Արեղյանի կողմից՝ նրա «Հայ ժողովրդական վեպը» հետազոտության մեջ և «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորում։

Սակայն, որքան մեզ հայտնի է, մինչև վերջերս հարկ եղած ուշադրություն չի դարձվել վիպական ավանդության ձևով մեզ հասած այդ զրույցի վրա պատմագիտական տեսանկյունից, որևէ լուրջ փորձ չի արվել թափանցելու վիպական հյուսվածքի խորքերը, բացահայտելու նրա հիմքում թաքնված բուն պատմական իրողությունը։ Առանձին հետազոտողների կողմից լոկ ընդհանուր ձևով նշվել է, որ Գնել-Տիրիթյան վիպական ավանդությունը ունեցել է պատմական հիմք։ Նույնիսկ հայ նոր պատմագրության խոշորագույն ներկայացուցիչների հետազոտություններում ևս, թեև երբեմն մատնանիշ է արվում Փավստոսի «Պատմության» համապատասխան հատվածի վիպական-ավանդական բնույթը, սակայն պատմությունը շարադրելիս փաստորեն զրեթե ողջովին վավերական են դիտվում նրա ընձեռած տվյալները, օգտագործվում դրանք զրեթե նույնությամբ՝ իբրև ստուգիվ ու հավաստի պատմական տվյալներ՝ առանց զանազանելու իրական-պատմականը վիպական-ավանդականից[3]։

---

2 Կ. Մելիք-Օհանջանյան, Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի (հաս. գիտ.), 1947, № 6, էջ 61։

3 Տե՛ս, օրինակ, Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, մասն Գ, Թիֆլիս, 1895, էջ 59—71, Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, էջ 176—182, Լեո, Հայոց պատմություն, հատ. Ի, Թիֆլիս, 1917, էջ 612—613, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 162—163 և այլուր։

Մեզ հետաքրքրող ավանդապատում զրույցը պատմական-քննական տեսանկյունով հետազոտելու, վիպական հյուսվածքի տակ թաքնված ու այլաբանորեն արտացոլված պատմական իրողությունների բուն իմաստը ի հայտ բերելու առաջին լուրջ փորձն արեց՝ իր պատմագիտական ինքնատիպ ուսումնասիրություններով հայագիտական հասարակայնության քաջ ծանոթ սփյուռքահայ տաղանդավոր բանասեր-պատմաբան Հրանտ Ք. Արմենը՝ վերջերս հրապարակած իր երկու ուշագրավ հետազոտություններում[4]։

Այդ հետազոտությունները, լինելով տրադիցիոն հայեցակետի արթնամիտ քննադատության առաջին փորձերը, գերծ չեն, անշուշտ, առանձին թերություններից. նրանցում, իրոք, տեղ են գտել առարկություն վերցնող, վիճարկելի դրույթներ, ծանրակշիռ փաստերով բավականաչափ չհիմնավորված եզրահանգումներ։ Սակայն ամեն խրախուսանքից վեր է ու գնահատելի հետազոտողի պիտական-քննադատական համարձակ ոգին, որով առաջնորդվելով նա ի նորո է քննում հայտնի ավանդապատում զրույցը՝ մեկնաբանելով այն Արշակ Ռ-ի գահակալության շրջանի հայ պատմական կյանքի էական առանձնահատկությունների տեսանկյունից, ձգտելով բացահայտել նրա կապը դարաշրջանի քաղաքական իրականության հայտնի եղելությունների հետ։ Քննադատական հետախուզման ճանապարհով հեղինակը հանգել է մի շարք արժեքավոր և ուշագրավ եզրակացությունների, որոնք սիրով օգտագործելու ենք սույն հոդվածում։ Միաժամանակ նկատենք, որ դարաշրջանի պատմական որոշ դեպքերի գնահատության վերաբերյալ հետաքրքրական դիտումներ ունի նաև պրոֆ. Մ. Մկրյանը՝ Ստ. Զորյանի «Հայոց բերդը» պատմավեպի մասին գրած գրախոսության մեջ[5]։

* * *

Գնել-Տիրիթյան ավանդապատում հորինվածքը, ինչպես հայտնի է, ամբողջովին և ընդարձակաբար մեջ է բերված Փավստոս Բյուզանդի «Պատմության» մեջ։ Վիպական ավանդության որոշ դրվագներ օգտագործել է նաև քերթողահայր Խորենացին՝ Արշակ Ռ-ի գահակալության շրջանի դեպքերը պատմագրելիս։ Միանգամայն որոշակի է, այսպիսով, մեր պատմիչների հետաքրքրությունը Գնել-Տիրիթյան ավանդական զրույցի նկատմամբ։

Ամբողջ խնդիրն այն է, ինչպես այդ երևում է մատենագրական աղբյուրների ուշադիր քննությունից, որ Արշակի ու նրա եղբորորդիների փոխհարաբերությունները (որոնք, ի դեպ, կազմում են ավանդական զրույցի հիմնական կորիզը), հանդիսանում են այն բարդ հանգույցներից մեկը, որոնց շուրջ դառնում են մեր անցյալի պատմագրության երկու խոշոր դեմքերի՝ Փավստոսի ու Խորենացու՝ Արշակ Ռ-ի գահակալության շրջանի մի շարք իրադարձություններին, մասնավորապես թագավորի վարած քաղաքականությանը ու անձնական հատկություններին տրվող կողմնակալ ու սուբյեկտիվ գնահատականները։ Ակնհայտ է, իրավ, որ IV դարի կեսերի հայ քաղաքական կյանքի մի շարք կարևոր հանգամանքներ մեր հիշյալ պատմիչների երկերում քննարկվում ու մեկնաբանվում են Արշակ-Ներսիսյան կոնֆլիկտի հայեցակետով, որը, բնա-

4 Տե՛ս «Պապ Արշակունի», Երուսաղեմ, 1958 և «Փառանձեմ թագուհի», Վենետիկ. 1962։
5 Տե՛ս «Գրական թերթ», 1960, № 13, 25 մարտի։

կանարար չէր կարող իր կնիքը չդնել ինչպես հայտնի իրադարձությունների շարադրանքի, այնպես էլ նրանց գնահատության վրա։ Այս հանգամանքը չի կարելի աչքաթող անել։ Առաջ անցնելով նկատենք, որ այս պարագան ի հայտ է գալիս նաև խնդրո առարկա վիպական ավանդությունը ուսումնասիրելիս։

Արդ, պատմական ի՞նչ իրողություն է արտացոլում Գնել-Տիրիթյան վիպական ավանդությունը, որո՞նք են եղել իրականում Գնել արքայազնի սպանության և դրան հաջորդող այլ ողբերգական դեպքերի բուն պատճառները, ի՞նչ հողի վրա են զարգացել Արշակ Բ-ի ու նրա եղբորորդիների փոխհարաբերությունները, որոնք, ինչպես հաղորդում են մեր պատմիչները, վերջիվերջո առիթ հանդիսացան Արշակի ու Ներսեսի և, դրանով իսկ որոշ իմաստով նույնիսկ՝ երկրի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների հարաբերությունների սրմանը։ Արդյո՞ք այդ բուռն ու ողբերգական իրադարձությունների գլխավոր պատճառները սոսկ անձնական կրքե՞ր, կամ պատմական որոշ գործիչների մարդկային բնավորության արատնե՞ր են եղել, ինչպես շարահարում է ավանդական զրույցը։

Փավստոսի մոտ ամբողջական ձևով պահպանված այդ ավանդապատում զրույցի համառոտ բովանդակությունը հետևյալն է. Արշակի եղբորորդին՝ Տիրիթը սիրահարվում է իր հորեղբորորդի Գնելի գեղեցիկ կնոջը՝ Փառանձեմին, որին տիրանալու նպատակով Արշակին քսությամբ զրգռում է Գնելի դեմ, թե իբր նա մտադիր է Արշակին սպանել ու գահը հափշտակել։ Թագավորը հավատալով Տիրիթի սադրանքներին, սպանել է տալիս Գնելին։ Այս դեպքը գայրացնում է Ներսես հայրապետին, որը խիստ խոսքերով դատապարտում է Արշակի արարքը և հեռանում նրանից։ Այնուհետև, երբ ի հայտ է գալիս Տիրիթի քսության հանգամանքը, Արշակը հրամայում է սպանել Տիրիթին. սրան հետևվում է Արշակի ամուսնությունը Փառանձեմի հետ։

Պիտի խոստովանել, որ այս ամենը ներկայացված է մեծ ճարտարությամբ, վիպական-գեղարվեստական ձևի մեջ ու կուռ պատճառաբանությամբ։ Իրավ, այնքան է այլափոխված իրական եղելությունների նախնական տեսքը, այնքան վարպետորեն են հարդարված դրանք վիպական հանգամանքներով, որ միայն Փավստոսի «Պատմության» հիման վրա, հասկանալի պատճառներով, անհնարին է բացահայտել ավանդապատում զրույցի հիմքում ընկած պատմական ճշմարտությունը։

Առաջադրված խնդիրը հնարավոր է դառնում լուծել ավանդապատում զրույցի վիպական հանգամանքների և Փավստոսի ու Խորենացու համապատասխան վկայությունների համադրական-քննական վերլուծության ճանապարհով։

Ամենից առաջ անհրաժեշտ ենք համարում պարզել, թե ո՞վ էր արդյոք վիպական ավանդության կենտրոնական դեմքերից մեկը՝ Գնելը. արդյո՞ք նա երկրի քաղաքական կյանքից հեռու, լոկ միայն զինախաղերով ու անմեղ վարժանքներով տարված այն «միամիտ» ու «անհոգ» «պատանյակն» է եղել, որպիսի տեսքով նրան ներկայացնում է ավանդապատում զրույցը, իրավ, ի՞նչ քաղաքական-հասարակական արժեք է ներկայացրել նրա անձնավորությունը և ինչո՞ւ նրա պատուհասումը սկիզբ հանդիսացավ մեծամեծ բարդությունների՝ երկրի քաղաքական կյանքի տեսակետից։

Փավստոսի ու Խորենացու համապատասխան տեղեկությունները հավաստում են, որ Գնելը Արշակ Բ-ի ավագ եղբոր՝ Տրդատի որդին էր, որը իր հոր և Արշակի մյուս եղբոր որդու՝ Տիրիթի հետ միասին իբրև պատանդ պահվում էր կայսեր պալատում։

Ըստ երևույթին այն ժամանակ, երբ կայսեր մոտ լուրջ կասկածներ են առաջանում, թե Արշակը իր քաղաքականությամբ թեքվում է դեպի Պարսկաստան, նա հրամայում է սպանել տալ իր մոտ պատանդ պահվող արքայեղբորը՝ Տրդատին[6] և իր զորավարներից մեկին հրամայում է դեպի Հայաստան շարժվել։ Արշակն զգալով դրության վտանգավորությունը, բարվոք է համարում գործը խաղաղությամբ ավարտել և Ներսեսին ընծաներով կայսեր մոտ է ուղարկում։ Ներսեսին, ինչպես երևում է, հաջողվում է ոչ միայն կանխել արշավանքի վտանգը, այլև բարեկամական հարաբերությունները վերականգնել կայսրության հետ (պարսկա-բյուզանդական սրված հարաբերությունների պայմաններում, բնականաբար, դա շահեկան էր նաև կայսրության համար)։

Խորենացու վկայությամբ, կայսրը մեծ պատիվների է արժանացնում Ներսեսին և հայոց հետ հետագա հարաբերությունները լավացնելու նպատակով Ներսեսին ուղևորում է Հայաստան, ինչպես և իր վախճանված եղբոր՝ Կոստասի հարսնացուին՝ Ոլոմպիային կին է ուղարկում Արշակին։ Խորենացու վկայությունից հայտնի է դառնում նաև, որ կայսրը Ներսեսի խնդրանք ազատ է արձակում իր մոտ իբրև պատանդներ պահվող երկու արքայազուն երիտասարդներին՝ Գնելին և Տիրիթին, որոնց ևս Ներսեսի հետ Հայաստան է առաքում։ Նույն Խորենացու վկայությունից կարելի է մակաբերել, որ կայսրը երկու արքայազուններից մեկի՝ Գնելի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք է ցուցաբերում։ Քերթողահայրը վկայում է. «Բայց կայսերն բարերարութիւն արարեալ մանկանն Գնելոյ, յաղագս զուր ի նոցանէ մահուանն Տրդատայ հօր նորա, տայ նմա զպատիւ հիւպատոսութեան, և զանձս յոլովս»[8]։

Քննարկենք Խորենացու այս վկայության հետաքրքրական հանգամանքները։ Նախ՝ ինչպես տեսնում ենք, պատմիչը կայսեր՝ Գնելի նկատմամբ ցուցաբերած բարեհաճ վերաբերմունքը գնահատում է մարդկային առաքինության տեսակետից—կայսրը քավելով իր մեղքը՝ իզուր թափած արյան փոխարեն՝ սպանված Տրդատի որդուն առանձնաշնորհումներ է տալիս։ Կարելի՞ է արդյոք հավաստի համարել Խորենացու տված այս պատճառաբանությունը։ Հարկ! Թե։ Այս առթիվ միանգամայն տեղին հիմնավոր կասկած է հայտնում Հրանտ Արմենը՝ կայսեր այդ քայլը գնահատելով իբրև Գնելի նկատմամբ հեռուն գնացող քաղաքական հաշիվների արդյունք։

«Զենք գիտեր,—գրում է նա,—թե կայսրը երիտասարդ Գնելին այս բարդաիկ պատիվը կ'ընե քաղաքակա՞ն հաշիվներով, որպես ապագա հավանական հայ թագավորի մը, եթե ոչ խղճահարված՝ տնոր հայրը սպանել տալուն

6 Խորենացին նրա այս բայլի պատճառը համարում է Արշակի խրոխտանալ-հպարտանալն ու կայսեր նամակին պատասխան չուղարկելը. տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 278 և 280—281։

7 Նույն տեղում, էջ 281։

8 Նույն տեղում։

համար, ինչպես Խորենացին կգրե։ Կփորձվինք ենթադրել թե Կոստանդիոս քաղաքական նկատառումներով կառներ այս քայլը»[9]։

Խորենացու որոշ տեղեկություններն ու դեպքերի հետագա ընթացքը, իրոք, պարզորոշ ցույց են տալիս, որ հայոց արքայազնի վերաբերյալ կայսեր վերաբերմունքի իրական դրդումները եղել են հիմնականում քաղաքական որոշակի նպատակադրումներ։

Հատուկ ուշադրության արժանի է այն պարագան, որ դանձերի հետ միասին, կայսրը Գնելին շնորհել է «պատիւ հիւպատոսութեան»[10]։

Այնուհետև. առանձին կարևորություն ունի այն հանգամանքը, որ Հայաստան առաքվող, կայսրից «հիւպատոսութեան» պատվին արժանացած արքայազնը հայրենի երկրում էլ բացառիկ արտոնյալ վիճակի մեջ է դրվել։ Հետաքրքրքրական է այս տեսակետից այն պարագան, որ նա բնակություն է հաստատում Այրարատի Կուաշ (Կավաշ) ավանում՝ իր դահազուրկ պապի՝ Տիրանի մոտ։ Դա աննախընթաց երևույթ էր ֆեոդալական Հայաստանի համար։ Բանն այն է, որ Արշակունյաց մեջ գործել է օրենք դարձած մի սովորություն—բացի թագավորից, արքունի տան անդամներից Այրարատում բնակվելու իրավունք է ունեցել թագավորի որդիներից միայն մեկը, որը դահաժառանգ է ճանաչվել։ իսկ արքունական տան մյուս անդամների համար մշտական բնակավայր է առանձնացված եղել երկրի մյուս գավառներում։ Այդ շատ պարզ երևում է Խորենացու մի վկայությունից. «Քանզի սովորութիւն էր արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ որդւոյ նորա, զոր փոխանորդ թագաւորք պահէին, և այլոց Արշակունեաց բնակել ի գաւառս Հաշտենից և Աղիովտի և Առբերանւոյ, հանդերձ ոճկօք և մտիւք յարքունուստ»[11]։

Միանգամայն բացատրելի է այս վիճակը Արշակունյաց Հայաստանի համար. սահմանված կարգի նպատակն էր արքունիքի տան մյուս անդամներին հեռու պահել պետության կառավարման գործերից ու պալատական բանսարկություններից։ Գնելի վերաբերյալ, ինչպես տեսնում ենք, խախտվում է ավանդական կարգը։ Խորենացին այն վերագրում է լոկ արքայահոր՝ Տիրանի ցանկությանը[12]։ Սակայն ինչպես դիտել են տալիս հետագա պարագաները, Գնելի բնակավայրի ընտրությունը, հավանաբար, եղել է ոչ միայն Տիրանի կամքով ու ցանկությամբ։ Այս գործում ըստ երևույթին էական դեր են խաղացել այլ կարևոր հանգամանքներ ևս, որոնք շատ ավելի ծանրակշիռ են թվում քան գորովագութ պապի ցանկությունը։

Մի պարագայի վրա ևս արժե ուշադրություն դարձնել—դա Տիրանի արտակարգ հովանավոր ու խնամակալ դիրքն է Գնելի նկատմամբ։ Խորենացու վկայությամբ, Տիրանը «տայ Գնելոյ զամենայն ինչս իւր, և զկալուածս գիւղից և

---

9 Հրանտ Ք. Ամեն, Պապ Արշակունի, էջ 118—119. տե՛ս նաև նույն հեղինակի «Փառանձեմ թագուհի» աշխատությունը, էջ 23։

10 Հիւպատոս—Consul, կայսրության ստեղծումից սկսած վերածվել էր ամենարարձր պատվավոր կոչման, որին արժանացող կայսեր հպատակը դառնում էր նրա (կայսեր) կոլեգան. մանրամասնությունները տե՛ս Louis Brehier, Les institution de l'Empire Byzantion, Paris, 1949, էջ 104—105, նաև Ю. А. Кулаковский, История Византии, том II, Киев, 1912, էջ 340—341։

11 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոցէ», էջ 232—283։

12 Տե՛ս նույն տեղում, էջ 282։

դաստակերտաց»[13]։ Այս փաստը թերևս կարելի էր գնահատել իբրև գթառատ պապի հոգատար վերաբերմունքի արտահայտություն սիրելի թոռան նկատմամբ—Տիրանը ցանկացել է լոկ նյութական ապահով վիճակ ստեղծել Գնելի համար։ Սակայն նկատի ունենալով դեպքերի հետագա ընթացքը, հակված ենք կարծելու, որ այստեղ ևս գործ ունենք Տիրանի՝ Գնելի նկատմամբ բավականին հեռուն գնացող նպատակների հետ։ Տալով Գնելին իր «զամենայն ինչս»՝ թագավորական կալվածքները, գյուղերն ու դաստակերտները, Տիրանը, ըստ երևույթին, ջանացել է որքան հնարավոր է ամուր հենարան ու հզոր դիրք ստեղծել իր թոռան համար երկրում և այդ արել է միանգամայն որոշակի նկատառումներից ելնելով։

Այժմ ուշադրություն դարձնենք այն բանի վրա, թե ինչո՞վ էր զբաղված հյուպատոսության բարձր պատվին արժանացած և կայսեր ու պապի հոգացողությամբ դանձերի ու կալվածքների տեր դարձած Գնելը Կավաշում—գուցե իր ներկայությամբ տարաբախտ պապին մխիթարելո՞վ, կամ Այրարատից դուրս բնակվող արքունական տան մյուս անդամների նման որսորդությա՞մբ և անհոգ զվարճություններո՞վ... Ոչ ամենևին։ Նա շատ ավելի լուրջ հոգսեր և զբաղմունքներ ուներ, որոնց մասին մոտավոր գաղափար են տալիս Խորենացու հաղորդած որոշ տվյալները։

Պատմելով երկու հորեղբորորդիների՝ Գնելի ու Տիրիթի փոխհարաբերությունների մասին, Պատմահայրը մեջ է բերում Տիրիթի՝ Արշակին հայտնած տեղեկությունները Գնելի վարքագծի մասին. «Ո՞չ գիտես, զի խորհեալ է Գնելոյ սպանանել զքեզ, զի ինքն փոխանակ քո թագավորեսցէ։ Ահա, տես, արքայ, զնշան իրին, զի բնակեցաւ Գնել յԱյրարատ, ի կալուածս ձեր թագաւորաց, և սիրտ ամենայն նախարարացն եղև ընդ նմա։ Քանզի կայսերքն նիութելով զայդ՝ ետուն նմա զպատիւ հիւպատոսութեանդ, և զանձս սաստիկս, որով պատուեաց զնախարարսն»[14]։

Այս առթիվ Փավստոսի մոտ կարդում ենք. «Եւ քսիս ստութեան զԳնելոյն ենդութեամբ առ թագաւորն Արշակ մատուցանէր (Տիրիթր)՝ թէ Գնել թագաւորել կամի, և զքեզ սպանանել. և ամենայն մեծամեծք և նախարարք և ազատք սիրեն զԳնել, և ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առաւել քան զքո»[15]։

Կարելի էր առանձին արժեք չտալ, թերևս նույնիսկ ամբողջովին անուշադիր թողնել պատմիչների այս վկայությունները, նկատի ունենալով, որ նրանք հետևելով, հավանաբար, ավանդապատում գրույցին, այն մեջ են բերում իբրև նախանձոտ ու ցածհոգի Տիրիթի քսություն, իբրև «անմեղ» Գնելի հասցեին արած ամբաստանություն։ Սակայն որոշ նկատառումներով պատմիչների, մասնավորապես Քերթողահոր հիշյալ վկայությունը էական հետաքրքրություն է ներկայացնում պարզաբանվող խնդիրների պատմաքննական լուսաբանության տեսակետից։

Ամբողջ խնդիրն այն է, որ Խորենացու կողմից իբրև Տիրիթի քսություն մեջ բերված տեղեկությունների էական մասի իսկությունը, ըստ էության, հավաստում է ինքը՝ պատմիչը։ Այսպես, վերը արդեն նշեցինք Գնելի բնակավայ-

13 Նույն տեղում։
14 Նույն տեղում։
15 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 181։

րի ընտրության փաստը, որով ոչ միայն խախտվում էր գործող ավանդական կարգը, այլև մի տեսակ ասես կանխորոշվում էր Գնելին իբրև «փոխանորդ Բագաւորի» դիտելու պարագան (հասկանալի է, իհարկե, առանց Արշակի համաձայնության)։ Նշեցինք նաև Տիրանի հոգացողության շնորհիվ Գնելի ֆեոդալական հզորությունը և դիրքը ամրապնդելու հանգամանքը։

Եվ վերջապես՝ Խորենացին ինքն էլ, ըստ էության, հավաստում է Գնելի՝ նախարարներին ու նրանց որդիներին իր շուրջը համախմբելու ակտիվ գործունեության փաստը, որը, ինչպես կարծում ենք, էական նշանակություն ունի Արշակի ու նրա եղբորորդու հարաբերությունների բուն էությունը պարզելու տեսակետից։ Խորենացին հաղորդելով Գնելի և Սյունյաց Անդոկ նախարարի գեղանի դստեր՝ Փառանձեմի ամուսնության մասին, այնուհետև շարունակում է. «(Գնելը) Բագաւորապէս արարեալ հարսանիս, տայ առատապէս սլարգեւս ամենեցուն նախարարացն։ Որոց հաճեալ ընդ նա և սիրեալ՝ Նոյն առ նա զզաւակս իւրեանց, զորս առեալ, մեծապէս հանկերծեալց զինու և զարդու. և յաւելին ևս սիրել զնա»[16]։

Կարելի է թերևս կարծել, որ Գնելի նկատմամբ նախարարների համակիր վերաբերմունքը պայմանավորված է եղել մի էական չափով երիտասարդ արքայազնի անձնական հմայքով. գուցե, իրոք, իր բնավորությամբ ու վարվելաձևով նա մի հաճելի և դեպի իրեն ձգող անձնավորություն է եղել։ Սակայն Խորենացու վերոբերյալ վկայությունը բոլոր հիմքերը տալիս է ենթադրելու, որ ինքը Գնելն էլ իր ակտիվ գործունեությամբ ջանացել է սիրաշահել նախարարներին, ձգտել է իր շուրջը համախմբել նրանց ու նրանց որդիներին։ Եվ ահա օգտագործելով հարսանիքի առիթը, հավանաբար, ավանդական սովորության անվան տակ նա «առատապէս պարգևս» է տվել նախարարներին։ Այստեղ արդեն ապահովված էր նրա առատաձեռնությունը. կայսեր սլարգևած «դանձս յոլովս» և իր պապի տված հարուստ ունեցվածքը, իրոք, հնարավորություն է տվել նրան իրականացնելու մտածածը։ Հարկ չկա, կարծում ենք, ապացուցելու, թե ինչ նշանակություն կունենային այդ առատ պարգևները՝ նախարարներից համախոհների մի շրջան ստեղծելու գործում։ Պարզ է, որ Գնելի շնորհած առատ պարգևների գայթակղությանը զյուրությամբ կենթարկվեին ու Գնելի շուրջը կհամախմբվեին ամենից առաջ Արշակի՝ կենտրոնական պետության հզորացման քաղաքականությունից զժգոհ կենտրոնախույս նախարարները, և կամ օտարերկրյա կողմնորոշմանը հարող հայ իշխանները, որոնց թիվը, հարկավ, փոքր չէր։

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Գնելին համակիր, նրա շուրջ համախմբված նախարարները «նոյն առ նա զզաւակս իւրեանց» և Գնելը լրջորեն զբաղվել է նրանց զինավարման գործով, մի զբաղմունք, որ հարկավ, հեռու էր անհոգ զվարճություն լինելուց։ Խորենացու ակնարկն այն մասին, թե Գնելը նախարարների որդիներին «մեծապէս հանդերձեաց զինու և զարդու», կարելի է հասկանալ նաև ռազմական պատրաստության իմաստով[17]։

---

16 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 282։

17 Հ. Աճառյանը հենց այս իմաստով էլ մեկնաբանում է Խորենացու խոսքերը, գրելով «Իր ռազմագիտական հմտության պատճառով՝ շատ նախարարներ իրենց որդիներին տալիս էին նրան (Գնելին) զինավարժության մեջ կրթելու համար», Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, էջ 477։

Վերը շարադրվածը կովաններ է տալիս պնդելու, որ Կոստանդ կայսրը Գնել արքայազնին «հիպատոսություն» պատիվը շնորհելով ու «դանձս յոլով» տալով Հայաստան էր ուղարկել քաղաքական հատուկ նպատակով։ Վստահ չլինելով պարսից արքայի ձեռքից իր թագն ստացած Արշակի հավատարմության վրա, դժգոհ լինելով նրա վարած քաղաքականությունից (որի հիմնական ուղղությունն էր ազգային ինքնուրույնության կողմնորոշումը), կայսրը ի գլուխ Գնելի «փոխանորդ թագաւորի» էր պատրաստում՝ սպասելով հարմար առիթի։ Անհիմն չի լինի կարծել, նույնիսկ, որ կայսրը իր մտադրությունները չէր թաքցնում Արշակից՝ նրան բացահայտ հասկացնել տալով, որ եթե նա ետ չկանգնի իր ընթացքից կամ թեքվի դեպի պարսից արքունիքը՝ կզրկվի գահից, որը հռոմեական սվիններով կոթնած կստանա Գնելը։

Գործելու այս եղանակը տակավին նորություն չէր և ոչ էլ արտասովոր մի բան բյուզանդական խարդախ ու խորամանկ կայսրների համար, որոնք ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում Հայաստանը ամբողջովին իրենց ազդեցությանը ենթարկելու համար։

Հետաքրքրական է պարզել, թե այս հարցում ի՞նչ դերք է բռնած եղել արքայահայրը։ Մատենագրական աղբյուրների սակավախոս տվյալները հիմքեր են տալիս ենթադրելու, որ Տիրանը ևս մտադրություն է ունեցել թագավորեցնելու թոռանը։ Այս վարկածը ընդունելի է համարում Հրանտ Ք. Արմենը[18]։ Իրականում եթե նույնիսկ պաշտոնական համաձայնություն չի կայացվել Տիրանի ու կայսեր միջև Գնելին թագավորեցնելու վերաբերյալ, ապա Տիրանը հավանաբար գաղտնի կերպով փայփայել է այդ միտքը և նույնիսկ սատարել նրա իրականացմանը։ Այս մասին չե՞ն խոսում արդյոք նախ և առաջ Գնելի ֆեոդալական հզորությունն ամրացնելու և երկրում նրա ազդեցիկ դերք ստեղծելու ուղղությամբ Տիրանի գործ դրած ջանքերը։ Ապա՝ տարակույսից վեր է, որ արքայահայրը քաջ տեղյակ պիտի լիներ Կավաշում իր կամքով ու ցանկությամբ բնակություն հաստատած Գնելի՝ նախարարներին իր շուրջը համախմբելու ակտիվ գործունեությանը և նրանց որդիների զինվորական պատրաստության հանգամանքներին։ Անհիմն չի լինի, թերևս, կարծել, որ այդ գործերում գեթ իր խորհուրդներով երիտասարդ արքայազնին կարող էր օգնած լինել փորձառու Տիրանը։

Գնելի նկատմամբ Տիրանի մտադրությունների էությունը առավել պարզ կդառնա, եթե նկատի ունենանք Տիրանի և Արշակ Բ-ի փոխհարաբերությունները։ Պատմությունից հայտնի է, որ դահազուրկ Տիրանը համաձայն չէր թագավոր որդու վարած քաղաքականության մի շարք հիմնական կետերին և զժգոհ էր նրանից։ Մյուս կողմից էլ Արշակից Տիրանի ունեցած դժգոհությունը կարող էր ունենալ նաև անձնական-հոգեբանական դրդապատճառներ։ Նկատի պիտի ունենալ, որ Արշակը գահն ստացել էր Տիրանին կուրացնող և գահազուրկ անող պարսից արքայի ձեռքից։ Այնուհետև, հազիվ թե բնական կլինի կարծել, որ իր կենդանության օրով դահազուրկ արված ու փաստորեն աքսորի դատապարտված Տիրանը դյուրությամբ կհաշտվեր իր վիճակի հետ։ Լստ երևույթին, այլևս հույս չունենալով, որ կարող է ինքը ետ ստանալ կորցրած գահը (նա շատ լավ հասկանում էր, որ այդ հարցը վճռվում էր պարսից արքունիքում և կայսեր պալատում, կամ արքայից արքայի ու կայսեր դիվանագիտական հա-

18 Տե՛ս Նրա «Պապ Արշակունի», էջ 122։

բարերություններով), Տիրանը ձգտում էր ուժեղ ու կտրուկ բնավորության տեր Արշակի փոխարեն գահ բարձրացնել անփորձ ու երիտասարդ Գնելին՝ ակնկալիք ունենալով, որ այդ ձևով ինքը նորից կդառնա պետության փաստական ղեկավարը։

Գնելին թագավորեցնելու հարցում, ուրեմն, համընկնում էին կայսեր շահերն ու գահազուրկ Տիրանի ցանկությունները, որոնց իրականացման համար վերջինս չէր կանգնի միջոցների ընտրության առաջ։

Տիրանի դիրքը, բնականաբար, չէր կարող երկար ժամանակ գաղտնի մնալ, և այն վաղ թե ուշ հայտնի պիտի դառնար Արշակին։ Ուշագրավ է, որ երբ Արշակը, ըստ եռևույթին տեսնելով դեպքերի բարդացումը և կանխագուշակելով Գնելից սպասվող վտանգը, հրաման է առաքում նրան «կամ ընդունել զմահ, կամ գնալ յԱյրարատայ և արձակել ի քէն զուստերս նախարարացդ», և երբ Գնելը ստիպված կատարում է թագավորի հրամանը ու հեռանում Կավաշից՝ մեկնելով «յԱդիովիտ և յԱորերանի», Տիրանը, տեսնելով իր հույսերի փլուզումը, բողոքում է խստորեն։ Պատմիչի վկայությամբ «Տիրան հաւն նորա (Արշակի) պատգամս խիստ յղեաց առ որդի իւր Արշակ. վասն որոյ հեղձամահ եղև յիւրոց սենեկապետաց ի հրամանէ արքայի ի գաղտնիս, և ի նմին աւանի Կուաշ թաղեցաւ...»[19]։

Այս վերջին փաստի իսկությունը հավաստվում է դեպքերի զարգացման տրամաբանական ընթացքով։

Ազգային ինքնուրույնության կողմնորոշման և կենտրոնացած պետության քաղաքականությունը, որ բացառիկ բարդ քաղաքական իրադրության պայմաններում այնքան հետևողականորեն իրականացնում էր մեր պետականության նշանավոր դեմքերից մեկը՝ Արշակ Բ-ն, բնականաբար, զոհեր էր պահանջում։ Առաջնահերթը նրա համար եղել է երկրի քաղաքական շահը, որին նա պատրաստ է եղել զոհաբերելու ամեն ինչ՝ նույնիսկ իր հարազատների կյանքը։

Ինչպես հայտնի է, ավանդապատում գրույցը Արշակի ձեռքով Գնելի պատուհասման միակ պատճառը համարում է Տիրիթի քսությունը, որի հիմքն էր նրա տոփանքը Փառանձեմի նկատմամբ։ Գուցե, իսկապես, իրական հող ունի Տիրիթի տոփանքի ու քսության փաստը։ Սակայն, ինչպես վերը տեսանք, Արշակի ու նրա եղբորորդու փոխհարաբերությունների բարդացման գլխավոր հիմքը իրականում հանդիսացել են քաղաքական լուրջ հանգամանքները։ Մատենագրական աղբյուրների ընձեռած տվյալների քննական ուսումնասիրությունը մեզ բերում է այն համզման, որ կայսեր հովանավորությունը վայելող Գնելի թագապահանջության հանգամանքն է, որ դեպքերը հանգեցրել է ողբերգական վախճանին։ Գնելը, ինչպես պիտի կարծել, կայսեր հովանավորությունը վայելելով, գահի թեկնածու է առաջադրվել երկրում բավականին մեծ ազդեցություն նվաճած բյուզանդասեր շրջանների կողմից։ Արշակը հավանաբար սկզբում հույս է ունեցել, թե նրա թագապահանջական ձգտումները կարող է սանձահարել՝ նրան մեկուսացնելով ու Այրարատից հեռացնելով միայն։ Սակայն հետո դեպքերն ստիպել են թագավորին դիմելու ծայրահեղ միջոցին՝ հարբունիս գրավելով նրա ունեցվածքը, կամ, ինչպես ասում է Խորենացին՝ «ագահելով ի գանձս սպանելոյն և ի ժառանգութիւն»[20]։

[19] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 283։

[20] Նույն տեղում, էջ 285։ Հրանա Արմենը իրավամբ մերժելով վիպական ավանդության պատճառաբանությունը և ճիշտ մատնանշելով Արշակի ու Գնելի փոխհարաբերությունների բա-

Այժմ տեսնենք, թե այս դեպքերին ինչպե՞ս վերաբերվեց Հայոց աշխարհի հոգևոր առաջնորդը՝ Ներսես բահանայապետը։ Ավանդական զրույցը պատմում է, որ երբ Ներսեսը Փառանձեմից իմացավ Գնելի դեմ Շահապիվանում նախապատրաստվող դավադրության մասին, դնաց թագավորի մոտ և ցանկացավ կանխել այն, բայց այդ նրան չհաջողվեց և Արշակի հրամանով Գնելն սպանվեց։ Մեծապես զայրացավ Ներսեսը, ծանր խոսքերով դատապարտեց Արշակի արարքը, անիծեց Արշակին և ողջ Արշակունյաց ցեղը ու «գնաց ի թագաւորէն, և այլ ոչ դարձաւ անդրէն յայն բանակ»[21]։ Այլ խոսքով ասած՝ նա հրաժարվեց հայրապետական գավազանից և հեռացավ ասպարեզից։ Միանգամայն որոշակի է, որ իրական եղելություններ այստեղ շատ է մթագնված վիպական հանգամանքներով։

Վերը արդեն նշեցինք, որ ինչպես Փավստոսը, նույնպես և Խորենացին Արշակ Բ-ի գահակալության շրջանի հայ քաղաքական կյանքի մի շարք իրադարձություններ առհասարակ գնահատում են Արշակ-Ներսեսյան կոնֆլիկտի հայեցակետով։ Հոգևոր դասի պատկանող մեր պատմիչների այդպիսի դիրքը միանգամայն բնական է ու բացատրելի։ Այժմ պատմագրության մեջ կասկածի ենթակա չէ այլևս այն, որ նրանք, իրոք, կողմնակալ վերաբերմունք են հանդես բերել ինչպես Արշակի անձնավորության, նույնպես և նրա վարած քաղաքականության նկատմամբ՝ հլնելով թագավորի ու Ներսեսի հայտնի փոխհարաբերություններից։ Այդ վերաբերմունքն իր բացահայտ արտահայտությունն է գտել նաև պատմիչների կողմից օգտագործված և անկասկած նրանց ձեռքով խմբագրված քննարկվող վիպական ավանդության մեջ, որում Արշակը՝ Հայ պետականության իրոք նշանավոր դեմքը, բերվում է իբրև պետական ողջախոհությունից և մարդկային սովորական առաքինություններից միանգամայն զուրկ, խարդախ ու խորամանկ մի ոճրագործ, իսկ Ներսեսին հատկացվում է մարդկային բարոյական բարձր սկզբունքների նախանձախնդիր պաշտպանի աստվածային դերը[22]։

Եվ ահա մատենագրական աղբյուրները Արշակի ու Ներսեսի հարաբերությունների խզման անմիջական առիթն են համարում Գնելի սպանության փաստը։ Միանգամայն պարզ է, որ եթե չկան այլ տվյալներ այդ փաստի հավաստիություն ժխտող, ապա այդ դեպքում Գնելի անձնավորությունը պետք է յուրաքանչյուր կարևոր նշանակություն ունեցած լիներ Ներսեսի համար, այլապես անհնարին է, իսկապես, կարծել, թե մի սովորական արքայազնի պատուհասման պատճառով Ներսեսի նման մի հաստատակամ ու համառ բնավորության

դաքական բնույթը, անհամոզիչ բացատրություն է տալիս ինչպես Գնելի, նույնպես և Արշակի ու սպարապետ Վասակի քաղաքական կողմնորոշումներին։ Հեղինակը առանց որևէ լուրջ կրավանի պնդում է, թե Գնելի թեկնածությունը գահի համար առաջ է քաշել պարսկասեր կուսակցությունը. տե՛ս նրա «Պապ Արշակունի», էջ 119—120, 124 և այլուր, նույնպես և «Փառանձեմ թագուհի», էջ 28—30, 34 և այլն։ Այդպես էլ անհիմն է պատմաբանի առաջ քաշած կարծիքը Արշակի և Վասակի բյուզանդական կողմնորոշման մասին, որ տարբեր առիթներով մի քանի անգամ կրկնում է նա իր նշված հետազոտություններում։

21 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 187։

22 Հայ, մասնավորապես սովետահայ պատմագրությունը բավականին հիմնավոր բացատրություն է տվել Ներսեսի և Արշակի հակասություններին՝ մատնանիշ անելով դրանց իրական սոցիալ-քաղաքական դրդապատճառները։ Այստեղ ավելորդ ենք համարում կրկնել արդեն հայտնի նշմարումները։

տեր գործիչը ինքնակամ կհրաժարվեր հայրապետական գավազանից ու կհեռանար ասպարեզից։

Գնելի անձնավորության քաղաքական-հասարակական արժեքին մեր վերը տված բացատրությունը օգնում է հասկանալու Ներսեսի վարմունքի բուն շարժառիթները։ Կասկածի ենթակա չէ Ներսեսի բյուզանդական կողմնորոշման պարագան. ավելին՝ նա եղել է բյուզանդասեր կուսակցության ամենաազդեցիկ դեմքն ու եռանդուն գործիչը։ Կարծում ենք, որ այս քաղաքական կողմնորոշման ընդհանրության հիմքի վրա էլ իրականում ստեղծվել է Գնելի ու Ներսեսի դաշինքը։ Վերջինս ոչ միայն ջերմացրած պիտի լինի Գնելի թագապահանջության ձգտումը, այլև գործնական միջոցների դիմած՝ այն իրականացնելու համար։ Այսպիսի եզրակացության համար հաստատուն կռվան կարող են ծառայել ոչ միայն Ներսեսի ու Արշակի՝ ծայր աստիճան լարված հակասությունները, այլև այն հանգամանքը, որ Ներսեսը բազմամյա փորձով համոզվել էր, թե Արշակի գոյության պայմաններում անհնարին է հաստատել հոգևոր գերիշխանություն գահի վրա, մի նպատակ, որին այնքան սևեռուն հետամուտ էր թագավորի նախկին սենեկապետը։ Ներսեսը մտածում էր, անշուշտ, որ երիտասարդ ու անփորձ Գնելին գահ բարձրացնելու դեպքում դյուրությամբ կհասնի իր իղձերի իրականացմանը։ Եվ ահա, երբ Արշակին հաջողվում է մեջտեղից վերացնել Գնելին, որով խոշոր չափով թուլանում են բյուզանդասեր կուսակցության դիրքերը, Ներսեսն ստիպված տեղի է տալիս ու հեռանում ասպարեզից։

Մեզ թվում է, որ ահա սա է ավանդապատում զրույցի տակ թաքնված մի կարևոր պատմական իրողությունը։

Հայտնի է, որ երկրում շոշափելի ուժ էր ներկայացնում նաև պարսկասեր կուսակցությունը, որին հարում էին մի շարք ազդեցիկ նախարարներ՝ խրախուսվելով պարսից արքունիքի օժանդակությունից ու խոստումներից։ Արշակն ստիպված էր ուժեր կենտրոնացնել նաև այս հոսանքի դեմ։

Երկու ճակատով օտարատիրական հակադիր կողմնորոշումների դեմ պայքարելիս Արշակ Ը-ն, բնականաբար, առիթի դեպքում պիտի օգտագործեր նրանց միջև եղած հակամարտությունները։ Այս հանգամանքը, ինչպես նաև Արշակի պայքարը պարսկասեր հոսանքի դեմ իր յուրօրինակ վիպական արձագանքն է գտել խնդրո առարկա ավանդապատում զրույցում՝ մի կողմից Տիրիթի ու Գնելի, իսկ մյուս կողմից Արշակի ու Տիրիթի հարաբերությունների վիպական հանգամանքներում։

Վերը արդեն նկատեցինք, որ թերևս ավանդավեպը ճիշտ է վերարտադրել Գնելի նկատմամբ Տիրիթի վարքագծի անձնական-կենցաղային շարժառիթը։ Սակայն մեր քննության ֆոնի վրա որոշակի կասկած է առաջանում, թե իրականում արդյոք միայն արբայազնի տոփա՞նքն է եղել Գնելի նկատմամբ նրա թշնամանքի հիմքը։ Այս հարցի հետ սերտորեն կապվում են նաև Արշակի ու Տիրիթի իրական փոխհարաբերությունների բնույթի հարցերը։

Ո՞վ էր, հիրավի, Արշակի մյուս եղբորորդին՝ Տիրիթը, արդյո՞ք նա լոկ նենգ ընավորությամբ, մոլի ու քսու, տոփանքով լի սիրուհար է եղել, ինչպիսին ներկայացնում է նրան վիպական ավանդությունը, ի՞նչ քաղաքական-հասարակական հակումներ է ունեցել նա, ի՞նչ դեր ու մասնակցություն է ունեցել նա ժամանակակից փոթորկահույզ կյանքի իրադարձություններին։

Պիտի բոստովանել, որ այս հարցի պարզաբանման համար մատենագրական աղբյուրները ուղղակի տվյալներ չեն հաղորդում։ Այս հարցերի դեթ մոտավոր պատասխանը տալու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա—դա Գնելի դեմ Տիրիթի համագործակցությունն է Վասակ սպարապետի ավագ եղբոր՝ Վարդ (Վարդան) Մամիկոնյանի հետ, որը սկզբում կարևոր պաշտոն է վարել Արշակի արքունիքում։

Բանն այն է, որ բյուզանդասեր կուսակցության կողմից դահի թեկնածու առաջ քաշված Գնելի դեմ Տիրիթը մենակ չի գործել. նրան մասնավորապես մեծ աջակցություն է ցույց տվել Վարդ Մամիկոնյանը։ Պատմիչը վկայում է, որ Տիրիթը Գնելի վարքագծի մասին Արշակ արքային լուր է տալիս «հանդերձ բաբեկամաւ իւրով Վարդանաւ զինակրաւ արքայի, որ ի Մամիկոնեան տոհմէն էր»[23]։ Եվ Խորենացին մեջ է բերում նրանց հայտնած լուրը (ըստ Խորենացու՝ Գնելին ամբաստանող)՝ Երկուսի անունից[24]։ Եվ այնուհետև շեշտում է Վարդանի խոսքերը. «Երդնոյր Վարդան յարևն արքայի և ասէր. «Իմովք ականջօք լուայ ի Գնելոյ, զի ասէր, թէ ոչ թողում հօրեղբօր իմում զվրէժ մահուան հօր իմոյ, որ վասն զորա եղև»[25]։ Ըստ Խորենացու՝ Արշակը այս նույն Վարդի ձեռքով է ուղարկում Կավաշում գտնվող Գնելին հասցեագրված սպառնալի հրամանը՝ «կամ ընդունել զմահ», կամ՝ ազատ արձակել իր շուրջ հավաքված «զուստերս նախարարաց» և անհապաղ հեռանալ Այրարատից։ Խորենացու վկայության համաձայն, նույն Վարդն է որսի ժամանակ արքայի հրամանով սպանում Գնելին։ Պատմիչը հատուկ շեշտում է, որ Վարդը «վաղվաղակի կատարէ ոչ այնչափ յաղագս հրամանի թագաւորին, քան թէ վասն կամացն Տիրիթայ իւրոյ սիրելոյն»[26]։

Փավստոսը, այլ կերպ շարադրելով Գնելի սպանության հանգամանքները, դարձյալ մատնանիշ է անում այս գործում Վարդի ակտիվ դերը—Արշակը, ըստ Բյուզանդի վարկածի, Շահապիվանի նավասարդի տոնին հրավիրելու համար «առաքէր զՎարդան զնդրայր սպարապետին՝ զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել կարասցէ (Գնելին), զի մի՛ խորհուրդն յայտնեսցի. զուցէ փախիցէ և ապրեցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցէ մինչև ի տեղին մահուան»[27]։ Այնուհետև պատմիչը վկայում է, որ «Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեկան Գնել հանդերձ իւրով կնաւն և զրամբն հաւանեցուցանէր (Վարդը) երթալ հասանել ի բանակն արքունի իբրև այն թէ ի մեծարանս ի՛նչ զնա կոչիցէ թագաւորն, բազում խնդրանօք տարեալ հասուցանէր՝ եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զտօնս նաւասարդաց առանց քո անցուցանել, զի հաճեալ և քաղցրացեալ է ընդ քեզ...»[28]։

Որքան էլ այս տեղեկությունները հարդարված լինեն վիպական գույներով, այնուամենայնիվ մի բան պարզ է, որ Գնելի դեմ Տիրիթին ակտիվ աջակցել է Վարդը՝ «զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմի»։

---

23 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 282։

24 Տե՛ս նույն տեղում։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 284։

27 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 182։

28 Նույն տեղում։

Ո՞րն է նրանց համագործակցության ու դաշինքի հիմքը։ Թերևս իսկապես Տիրիթն ու Վարդը անձնապես մտերիմներ են եղել միմյանց։ Սակայն մենք հակված ենք կարծելու, որ այդ դաշնակցությունն իրականում լուրջ հասարակական-քաղաքական հիմք է ունեցել—արքայազնին և ժամանակի ամենաազդեցիկ նախարարներից մեկին մի բանակի մեջ են միավորել քաղաքական նույն կողմնորոշումն ու հետևում գնացող նպատակները։ Այս հարցի վրա լույս են սփռում մատենագրական աղբյուրները, ի մասնավորի՝ Խորենացին։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ դերով է հանդես եկել ժամանակի քաղաքական կյանքի թատերաբեմում Վարդ Մամիկոնյանը։ Այս հարցի պատասխանն ինքնին շատ բան կպարզի մեզ հետաքրքրող հանգամանքների մասին։

Մատենագրական աղբյուրների վկայությունները որոշակիորեն հավաստում են Մամիկոնյան նահապետի պարսկական կողմնորոշման փաստը։ Հնարավոր է, որ սկզբում՝ արքունի բարձր պաշտոն վարելիս, նա հավատարիմ է եղել Արշակին։ Բայց հետագայում այլ նախարարների՝ իր եղբոր՝ Վահան Մամիկոնյանի, Մերուժան Արծրունու և այլոց հետ միասին Վարդը ևս թեքվել է դեպի պարսից արքունիքը՝ դառնալով պարսկասեր հոսանքի ականավոր դեմքերից մեկը։ Այնքան մեծ վստահություն է տածել Շապուհը Վարդի նկատմամբ, որ նրան է ընտրել իբրև միջնորդ Արշակի հետ բանակցություններ վարելիս։ Այդ շատ պարզ երևում է Փավստոսի համապատասխան վկայություններից. «...Եւ վասն դի պատգամաւոր իրացս այսոցիկ (խոսքը Շապուհի ու Արշակի դաշնագրական բանակցությունների մասին է—Վ. Ն.) էր տանուտէրն նահապետն Մամիկոնեան տոհմին երեց եղբայր Վասակայ, որում անուն Վարդան կոչէր, մեծապէս արքայ Շապուհ յակն առեալ սիրէր զնա»[29]։

Դեպքերը դասավորվում են այնպես, որ Վասակը կասկածելով Պարսկաստանում Արշակի դեմ նախապատրաստվող դավերի վրա՝ նրան համոզում է հեռանալ Շապուհի երկրից, չհավատալ նրա խոստումներին ու երդումներին։ Արշակը լսում է նրան ու նրա հետ միասին Հայաստան փախչում՝ փաստորեն անավարտ թողնելով բանակցությունները Շապուհի հետ։ Պարսից արքան, սակայն, չի կորցնում Արշակին դեպի Պարսկաստանը թեքելու հույսը, և նրան համոզելու նպատակով Հայաստան է ուղարկում նույն Վարդ Մամիկոնյանին։ Խոսքը տանք պատմիչին. «Իսկ Վարդանն, Մամիկոնեան տանուտէրն,—գրում է Փավստոսը,—գայր հասանէր հրեշտակութեամբ յարքայէն Պարսից առ արքայն Հայոց Արշակ և մատուցանէր զհրովարտակն առաջի նորա։ Եւ պատմէր նմա ի նմանէ բանս խաղաղութեան և զհաշտութեան, և զերդմանցն հաստատութիւն։ Եւ տայր պատգամ, թէ որ ինչ եղեն, այն ահա թողեալ լիցի վնասն. բայց դու յայսմ հետէ կաց յուխտին բանի, և մի՛ անցաներ ըստ բան երդմանցն քում օրինաց՝ յոր երդուար»[30]։

Բերված տվյալները անժխտելիորեն հաստատում են Վարդ Մամիկոնյանի պարսկասիրական ակտիվ գործունեությունը։ Արդյոք քաղաքական այս հիմքի վրա չի՞ կռվել նրա և Տիրիթի դաշինքը բյուզանդասեր հոսանքի, և մասնավորապես արքայազն Գնելի դեմ։ Դեպքերի զարգացման տրամաբանական ընթացքը, ինչպես կարծում ենք, հաստատուն հիմքեր է տալիս այսպիսի ենթադրության համար։

---

29 Նույն տեղում, էջ 195։

30 Նույն տեղում, էջ 197։

Արշակ Բ-ն, ինչպես ասվեց, բյուզանդասեր ազդեցիկ հոսանքի դեմ մարտնչելիս օգտագործել է այդ հոսանքի ու պարսկասեր կուսակցության հակասությունները։ Անհավանական չէ, որ Գնելին մեջտեղից վերացնելու համար նա, իրոք, օգտագործած լինի պարսկասեր հոսանքի գործիչներին՝ մասնավորապես Տիրիթին ու Վարդին։

Արշակը, վաղ թե ուշ, սակայն, վճռական քայլերի պիտի դիմեր նաև հետզհետե հզորացող պարսկասեր հոսանքի դեմ՝ կանխելով նրա վտանգավոր գործունեությունը։ Հենց այս ֆոնի վրա էլ, ահա, հասկանալի է դառնում, թե ինչու Գնելի հետ հաշիվները մաքրելուց հետո Արշակը անհրաժեշտ համարեց մեջտեղից միաժամանակ վերացնել նաև պարսկասեր հոսանքի ակտիվ գործիչ Վարդ Մամիկոնյանին ու նրա բարեկամ արքայազն Տիրիթին։

Պիտի խոստովանել, որ ավանդապատում զրույցի մեջ Վարդի ու Տիրիթի պատուհասման իրական հանգամանքները շատ են մթագնված վիպական հնարանքներով։ Ակներև է, մասնավորապես, նրանց սպանության պատճառաբանության լոկ վիպական բնույթը։ Ըստ ավանդապատում զրույցի, ինչպես հայտնի է, Արշակը հրամայեց Տիրիթին սպանել, երբ վերահասու եղավ, թե նա իր մոտ ամրաստանել է Գնելին։ Տիրիթն սպանվեց փախչելիս, Բասենի անտառներում։ Այդ նույն ավանդավեպը Վարդի սպանության պատճառը համարում է նրա եղբոր՝ Վասակ սպարապետի նախանձն ու Փառանձեմի թելադրանքը[31]։ Ըստ Փավստոսի վարկածի՝ Վարդն սպանվել է Արշակի հրամանով իր իսկ եղբոր՝ Վասակի ձեռքով՝ Տայքում, իր էրախանի ամրոցում[32]։

Փավստոսից տարբերվելով, այլ կերպ է ներկայացնում Խորենացին Տիրիթի ու Վարդի պատուհասման հանգամանքները[33]։ Ըստ Խորենացու, երբ Շապուհն ավարտեց պայքարը «հյուսիսական ազգերի» դեմ, «արտահայտեց իր բարկությունը Արշակի վրա, որ նա այնքան տարիներ հարկ է տալիս կայսրին և ոչ իրենց»։ Եվ այս պատճառով Արշակը ընծաներով նրա մոտ է ուղարկում «զՏիրիթ և զնորին սիրեցեալն Վարդան», ու հաշտություն է խնդրում։ Բայց Շապուհը, որ ոխ ուներ հույների դեմ «անցյալ պատերազմների համար», կռվի է ելնում նրանց դեմ, և խնդրում է Արշակին՝ որ սա հայոց զորքով իր հետ գնաս Արշակը պատճառներ բերելով, ինքը չի գնում, բայց մի փոքր գունդ է ուղարկում Շապուհին։ Դրանից հետո, ըստ Խորենացու, Արշակը Տիրիթի վրա բարկանում է ու նրան զրկում պատվից, պատճառ բերելով, թե Շապուհը հույների դեմ գնաց Տիրիթի թելադրանքով։ Եվ ապա, զրգռվելով Վասակից՝ Արշակը նախատում է Տիրիթին ու Վարդանին «ամօթալի բանիւք և կսկծեցուցանողօք»։ Զտանելով պարսավանքը, ինչպես պատճառաբանում է Խորենացին, նրանք «զէմ եղեալ գնացին առ Շապուհ հատուածՄ»[34]։ Սակայն նրանց մտադրությունը չի իրականանում, Արշակի հրամանով Վասակը հետապնդում է նրանց ու սպանում երկուսին էլ։

Որքան էլ մանրամասների մեջ տարբերվեն Խորենացին ու Փավստոսը, որքան էլ մութ կետեր ունենան նրանց տվյալները, որքան էլ նրանց վկայություններում իրական փաստերը խառնված լինեն վիպական հանգամանքնե-

31 Տե՛ս նույն տեղում, էջ 198։

32 Տե՛ս նույն տեղում, էջ 189—190։

33 Տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 285—286։

34 Նույն տեղում, էջ 286։

բին, այնուամենայնիվ մի բան պարզ է, որ Վարդի ու Տիրիթի սպանությունը իրականում ունեցել է լուրջ քաղաքական դրդապատճառներ։ Այս երկուսի մտերմությունը, համատեղ գործունեությունը Գնելի դեմ, Վարդի ակնհայտ պարսկասիրական վարքագիծը և մասնավորապես՝ Վարդի ու Տիրիթի միաժամանակյա համատեղ վախճանը (ըստ Խորենացու վարկածի) կարծում ենք կովաններ են տալիս տեսնելու Տիրիթի գործունեության քաղաքական բնույթը ու նրա անկման հասարակական շարժառիթները։

Իրադրությունների որոշակի ընթացքը, իրոք, ցույց է տալիս, որ անհավանական չի լինի կարծել նույնիսկ, որ արքայազն Տիրիթի պատուհասման գլխավոր պատճառը նրա թագապահանջական ձգտումն էր, որ ջերմացվում ու պաշտպանվում էր պարսկասեր հոսանքին հարող նախարարների կողմից[35]։

Իրերի վիճակի բնության վերը շարադրված հայեցակետը, ի դեպ, հնարավորություն է տալիս վերականգնելու պատմական ճշմարտությունը Վասակ սպարապետի մասին, սրբելու մեծ հայրենասերի անվան վրա տրադիցիոն պատմագրության կողմից հանիրավի դրված «եղբայրասպան» արատը։ Մեր քննությունից երևում է, որ իր այդ բայլով Վասակը մեկ անգամ ևս ապացուցել է իր նվիրվածությունը հայրենիքի ազատության ու անկախության մեծ գործին բարձր դասելով անձնականը հասարակականից։

Ահա թե պատմական ինչ իրողություններ են ընկած Գնել-Տիրիթյան հայտնի ավանդավեպի հիմքում, ահա թե Արշակի գահակալության շրջանի հայ քաղաքական կյանքի ինչպիսի բարդ ու ներհակ իրադարձություններ է արտացոլում արտաքին հայացքից սոսկ կենցաղային հանգամանքներ բովանդակող վիպական այդ հորինվածքը։

Վերջում կցանկանայինք նշել, որ վիպական այդ ավանդությունը որոշակի միտում ունի—այն ուղղված է Արշակի դեմ և ժամանակին ծառայել է նրա անվանարկմանը՝ և՛ իբրև անձնավորության, և՛ իբրև պետական գործչի։ Բացահայտ է մյուս կողմից վիպական հյուսվածքի մյուս միտումը՝ Ներսեսի փառաբանումը, նրա հեղինակության բարձրացումը։ Այս միտումներին են հարմարեցված ինչպես իրական դեպքերի գեղարվեստական արտացոլման ընդհանուր սկզբունքները, այնպես էլ հորինվածքի ճարտար կառուցվածքն ու վիպական հանգամանքները։

Ավանդավեպի վերը նշված բացահայտ միտումների առկայությունը մտածել է տալիս, որ նրա հորինման գլխավոր միջավայրը պիտի որոնել, հավանաբար, Ներսեսին աստվածացնող հայ հոգևոր դասի ու Արշակի վարած կենտրոնացած պետության հզորացման ու բուն ազգային կողմնորոշման քաղաքականությունից դժգոհ նախարարների շրջաններում։ Վիպական ավանդության վերջնական խմբագրությունը, անկասկած, իրականացվել է մեր հոգևոր պատմիչների՝ Փավստոսի ու Խորենացու, ձեռքով։

35 Հմմտ. Հրանտ Արմեն. Պապ Արշակունի, էջ 126։

К ВОПРОСУ ОБ ИСТОРИЧЕСКОЙ ОСНОВЕ ЭПИЧЕСКОГО ПОВЕСТВОВАНИЯ О ГНЕЛЕ И ТИРИТЕ

В. С. НАЛБАНДЯН

(Резюме)

Древнеармянское эпическое повествование о двух племянниках царя Аршака Второго—принцах Гнеле и Тирите, дошедшее до нас в цельном виде в «Истории Армении» Павстоса Бузанда (V в.) и частично использованное в «Истории» Мовсеса Хоренаци, достаточно изучено с точки зрения фольклористики. Однако до последнего времени это произведение почти не привлекало внимания исследователей в историческом аспекте.

Несмотря на то, что армянская фольклористика подтвердила эпический характер указанного повествования, все же, даже в исторических исследованиях нового и новейшего периода, данные его зачастую почти целиком принимались и продолжают приниматься как исторически достоверные.

Сопоставление эпического повествования с ценными достоверными свидетельствами первоисточников и их сравнительно-критическое изучение показывает, что под бытовой окраской этого произведения скрываются сложные и противоречивые обстоятельства в период царствования Аршака Второго (середина IV в.). В частности, подтверждается, что в повествовании в иносказательном (и, вместе с тем, в значительной степени искаженном) виде отражалась ожесточенная борьба, которую, руководствуясь национальными побуждениями, вел царь Аршак против персидского и византийского господства, во имя укрепления центральной государственной власти. Положение Аршака и верных ему нахараров усугублялось тем, что они были вынуждены одновременно бороться и против внутренних врагов, раболепствовавших перед иноземными угнетателями. Часть армянской светской знати и духовенства, исходя из своих корыстных интересов, придерживалась иностранной, персидской и византийской, ориентации. Нередко к такой прослойке примыкали также отдельные члены царской семьи. Фактами подтверждается, что враждебные взаимоотношения между Аршаком и его двумя племянниками, вопреки утверждению эпического повествования, складывались на политической почве. Принц Гнел, получив от византийского царя почетный титул «консула» (*պատիւ հիւպատոսութեան*), в действительности стал одним из главных проводников византийского курса. В союзе с патриархом Нерсесом и при активной поддержке отца Аршака—Тирана, лишившегося трона, Гнел стремился свергнуть Аршака и занять его престол, за что и был казнен царем. Другой племянник царя—Тирит—также, вопреки повествованию, был казнен за свою политическую деятельность в пользу персидского двора. Враждебные взаимоотношения между Гнелом и Тиритом в действительности обусловливались противостоящими друг другу политическими ориентациями, хотя не исключена возможность существо-

вания и личных мотивов их вражды. Можно предположить, что в эпическом повествовании о Гнеле и Тирите отчетливо выражается, с одной стороны, тенденция дискредитировать Аршака Второго, а с другой—тенденция возвысить и прославить патриарха Нерсеса. Это дает основание полагать, что разбираемое повествование создавалось в кругах духовного сословия—последователей патриарха Нерсеса и нахараров, недовольных политическим курсом царя. Не исключена также возможность, что окончательная редакция этого произведения принадлежит перу наших духовных историков (в частности, Павстосу Бузанду). Ведь именно они истолковывали с большим пристрастием многие события периода царствования Аршака, ставя во главу угла конфликт между ним и Нерсесом